*Տավուշի մարզի*
*Սևքարի միջն դպրոց ՊՈԱԿ*

# ՀԱՄԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ



***2022-2023 ուստարի***

## Պարտադիր կրթության կենսագործում

| № | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխանատու անձ | Ծանոթ ութ-յուն |
|---|---|---|---|---|
| 1. | Անցկացնել 6 տարեկան երեխաների հաշվառում և ընդունելություն: | օգոստոս | Տնօրեն,գործավար, օպերատոր | |
| 2. | Երեխաներին ապահովել դասագրքերով : | օգոստոս | Տնօրեն,գրադարանավար | |
| | Ուշադրության կենտրոնում պահել ետ մնացող աշակերտներին : | տարվա ընթացքում | Ուսմասվար,ուսուցիչներ,դասղեկներ | |
| 3. | Պարտադիր ուսուցման գործընթացի իրականացմանը մասնակից դարձնել ծնողներին, ծնողական խորհրդին: | տարվա ընթացքում | ՄԿԱ,դասղեկներ | |
| 4. | Արտաբյուջետային միջոցները ներդնել ուսումնական պրոցեսի արդյունավետության բարձրացման նպատակով/առկայության դեպքում/: | ուստարավա ընթացքում | Տնօրեն,հաշվապահ | |
| 5. | Կոմպլեկտավորել դասարանները, երեխաներին ծանոթացնել դպրոցի ներքին կարգապահական կանոններին, գործող ռեժիմին, ինչպես նաև իրենց իրավունքներին ու պարտականություններին: | օգոստոս | Տնօրեն,ՄԿԱ | |
| 6. | Ստեղծել ջերմ մթնոլորտ ուսումնական գործընթացը բարեհաջող սկսելու համար: | օգոստոս | Տնօրեն,փոխտնօրեններ | |

## Աշխատանք մանկավարժական կադրերի հետ, որակավորման բարձրացում

| № | Աշխատանքի բովանդակություն | Կատարման ժամկետը | Պատասխանատու անձ | Ծանո թութ-յուն |
|---|---|---|---|---|
| 1. | Տարեսկզբին հրավիրել առարկայական մասնախմբերի նախագահների խորհրդակցություն, պլանավորել նրանց աշխատանքային տարեկան գործունեությունը՝ դպրոցում ուսումնադաստիարակչական ախատանքի արդյունավետության բարձրացման ուղղությամբ։<br>Հանձնարարել՝<br>ա. առարկայական մասնախմբերում քննարկել, ամբողջական տեսքի բերել ուստարվա առարկայական մասնախմբի աշխատանքային պլանը և ներկայացնել հաստատման։ | օգոստոս<br><br><br><br><br><br><br><br><br>օգոստոս | Տնօրեն ,ուսմասվար | |
| 2. | Անցկացնել առարկայական մասնախմբերի ղեկավարների սեմինար խորհրդակցություն, լսել մասնախմբերի նախագահների հաշվետվությունները կատարած աշխատանքների մասին, քննարկել, տալ համապատասխան հանձնարարություններ անհրաժեշտության դեպքում աշխատանքային պլաններում կատարել փոփոխություններ։ | ամիսը մեկ անգամ | Տնօրեն,ուսմասվա ր,մ/մ նախագահներ | |
| 3. | Կատարել դասալսումներ՝ միջին հաշվով շաբաթական 2-3 ժամ։ Դասալսումները կատարել նպատակային և նույն օրը քննարկել ուսուցչի հետ՝ դասալսման տետրում գրելով անհրաժեշտ դիտողություն,առաջարկություններ և հանձնարարություններ։ | ուստարվա ընթացքում | Տնօրեն,ուսմասվա ր | |
| 4. | Ապահովել ուսուցման արդյունքների ստուգման և գնահատման 10 միավորանի սանդղակի անցման մեթոդական ցուցումների կիրառմամբ։<br>Անհրաժեշտության դեպքում ստեղծել | սեպտեմբեր | Տնօրեն,ուսմասվա ր | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | թեմատիկ հարցազրույցներ և հաճախ 6-12-րդ դասարաններում աշակերտների գիտելիքները ստուգել նաև համակարգիչների միջոցով: | | | |
| 5. | Օգտագործել լաբորատորիաները,դասերը անցկացնել լաբորատորիաներում: Հետևել որպեսզի դասը հագեցված լինի զանազան ուսումնադիտողական նյութերով, լաբորատոր սարքավորումներով: Ուսուցիչների համար կազմակերպել դասախոսություններ, սեմինարներ ըստ անհրաժեշտության: | տարվա ընթացքում | Տնօրեն,ուսմասվար | |
| 6. | Պահանջել, որպեսզի յուրաքանչյուր ուսուցիչ ուսումնական տարվա ընթացքում հանդես գա առնվազն մեկ մեթոդա-մանկավարժական առարկայական բնույթի զեկուցումով: | ուստարվա ընթացքում | Տնօրեն,ուսմասվար | |
| 7. | Ուսումնասիրել հմուտ ուսուցիչների առաջավոր փորձը և տարածել դպրոցում: | ուստարվա ընթացքում | Տնօրեն,ուսմասվար | |
| 8. | Մանկավարժական խորհրդում կարդացվելիք զեկույցներ<br>1Մասնակցային մշակույթի ձևավորումը դպրոցում<br>2.Բազմակարծիք մշակույթի ձևավորումը դպրոցում<br>3.Կոմպետենցիաների կիրառումը դպրոցում | ուստարվա ընթացքում<br>մշտապես | Տնօրեն,ուսմասվար | |
| 10. | Կազմակերպել կոնսուլտացիոն պարապմունքներ աշակերտներին քննություններին նախապատրաստելու համար:<br>Ժամանակին կազմակերպել և հաստատել քննական հանձնաժողովները փակցնել քննական կարգացուցակը՝ քննությունները սկսելուց առնվազն 10 օր առաջ: | մայիս | Տնօրեն ,ուսմասվար | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 11. | Ուսուցիչներին հաղորդակից դարձնել գիտության և մանկավարժության նորագույն նվաճումների: | Ուստարվա ընթացքում | Տնօրեն,ուսմասվար | |
| 12. | Ուսուցիչներին ժամանակին ծանոթացնել ՀՀ կառավարության որոշումներին, ՀՀ կրթության և գիտության,մշակույթի և սպորտի  նախարարության հրամաններին, հրահանգներին և այլ նորմատիվ փաստաթղթերին: | Ուստարվա ընթացքում | Տնօրեն,ուսմասվար | |

## Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպում

| № | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխանատու անձ | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1. | Ուսումնական առարկաների դասավանդումը բարելավելու նպատակով ուսուցումը կազմակերպել հնարավորության դեպքում կաբինետային համակարգով, հարստացնել դպրոցի ուսումնանյութական բազան, օգտագործել առկա տեխնիկական միջոցների ողջ հզորությունը: | ուստարվա ընթացքում | Տնօրեն,ուսմասվար | |
| 4. | Շարունակել աշխատանք տանել կաբինետները և դասարանները անհրաժեշտ նյութերով և սարքավորումներով կահավորելու ուղղությամբ: | Օգոստոս-մայիս | Տնօրեն,ուսմասվար,տնտեսվար | |
| 5. | Սովորողների կրթության որակը բարձրացնելու նպատակով կատարել նպատակային դասալսումներ, արդյունքները քննարկել: | ուստարվա ընթացքում | Տնօրեն,ուսմասվար,մ/մ նախագահ | |
| | Կատարել առարկայական ուսումնասիրություններ, արդյունքները քննարկել առարկայական մասնախմբերի նիստերում, տնօրինության խորհրդակցություններում, մանկավարժական խորհրդում կամ կոլեկտիվի ժողովում: Ուսումնասիրել՝ ա/ հայոց լեզու, գրականություն | ուստարվա ընթացքում<br>ուստարվա ընթացքում | | |
| 6. | բ/ ՏՀՏ-ի օգտագործում դասերին<br>գ/ Նոր ծրագրերի և չափորոշչային պահանջների իրականացում: | ուստարվա ընթացքում | Տնօրեն,ուսմասվար | |
| 7. | Անցկացնել դպրոցական օլիմպիադաներ:<br>Հայտանաբերել օժտված երեխաներին, տալ առարկայական խոր և կայուն գիտելիքներ, մղել նրանց | դեկտեմբեր, ապրիլ | Տնօրեն,ուսմասվար | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ստեղծագործական, որոնողական աշխատանքի: | դեկտեմբեր | | |
| 9. | Հիմք ընդունելով աշակերտների ցանկությունը և ծնողների համաձայնությունը՝ կազմակերպել լրացուցիչ կրթական ծառայություններ | ուստարվա ընթացքում | Տնօրեն,ուսմա սվար | |
| | **Դասղեկական աշխատանք** | | | |
| 1. | Դասղեկներից պահանջել՝ աշխատանքային պլանի հիմքում ամրագրել հետևյալ դրույթները՝ ստեղծել դասարանական ամուր կոլեկտիվ: Աշակերտներին տալ հայեցի դաստիարակություն, նրանց մեջ արթնացնել ազգային արժանապատվություն և հպարտություն: Դաստիարակության հիմքում դնել միջնակարգ հանրակրթության դպրոցի շրջանավարտի նկարագրի պահանջները: | ուստարվա ընթացքում<br>ուստարվա ընթացքում | Տնօրեն ,ՄԿԱ,դասղեկ ներ | |
| 2. | Հետևողական աշխատանքի միջոցով հնարավորինս նվազեցնել անհարգելի բացակայությունները: | | ՄԿԱ,դասղեկն եր | |
| 3. | Ապահովել ծնող-ուսուցիչ կապը:Կազմակերպել ծնողական ժողովներ/յուրաքանչյուր կիսամյակն առնվազն 2 անգամ/: | ուստարվա ընթացքում | ՄԿԱ,դասղեկն եր | |
| | **Գեղագիտական դաստիարակություն** | | | |
| 1. | Հետևողական աշխատանք տանել աշակերտների գեղագիտական դաստիարակության գործի բարելավման ուղղությամբ: | ուստարվա ընթացքում | ՄԿԱ,դասղեկն եր | |
| 2. | Դպրոցում ստեղծել տնօրենին կից գեղագիտական դաստիարակության խորհուրդ: | ուստարվա ընթացքում | | |
| 3. | Սովորողների օգնությամբ ձևավորել շենքի միջանցքներն ու կաբինետները, կազմակերպել գեղարվեստական միջոցառումներ, հաշվետու համերգներ: | սեպտեմբեր | ՄԿԱ,դասղեկն եր,ԴԱԿ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | ուստարվա ընթացքում | | |
| | **Ֆիզիկական դաստիարակություն** | | | |
| 1. | Սովորողների ֆիզիկական դաստիարակության բարելավման նպատակով կազմակերպել սպորտային մրցույթներ։ | օգոստոս-մայիս | ՄԿԱ,դասղեկներ,զինղեկ,ֆիզկուլտուրայի ուսուցիչ | |
| 2. | Պարբերաբար կազմակերպել աշակերտների կողմից մարզական նորմատիվների հանձնում։ | սեպտեմբեր, մայիս | ՄԿԱ,դասղեկներ,զինղեկ,ֆիզկուլտուրայի ուսուցիչ | |
| 3. | Խստորեն վերահսկել ֆիզկուլտուրայի դահլիճում, ուսումնական արհեստանոցներում, լաբորատորիաներում անվտանգության և սանիտարական կանոնների պահպանմանը։ | մշտապես | | |
| 4. | Ուսումնական տարվա ընթացքում կազմակերպել <<Սպորտը մեր առօրյան է>>։ | ուստարվա ընթացքում | ՄԿԱ,դասղեկներ,զինղեկ,ֆիզկուլտուրայի ուսուցիչ | |
| 1. | **Ռազմահայրենասիրական աշխատանք** | | | |
| | Անցկացնել <<Քաղաքացիական պաշտպանության օրը դպրոցում>> միջոցառումը։ | մշտապես | ՄԿԱ,դասղեկներ,զինղեկ,ֆիզկուլտուրայի ուսուցիչ | |
| 1. | **Աշխատանքային դաստիարակություն** | | | |
| | Բարձրացնել աշխատանքային ուսուցման, աշակերտների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ տարվող աշխատանքների որակը։ | ուստարվա ընթացքում | ՄԿԱ,դասղեկներ,զինղեկ,ֆիզկուլտուրայի ուսուցիչ,ԴԱԿ | |
| | **Գրադարանային աշխատանք** | | | |
| 1. | Օգնել գրադարանավարին կազմելու և հաստատման ներկայացնելու տարեկան աշխատանքային պլանը։ | օգոստոս | Ուսմասվար,գրադարանավար | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2.<br><br>3. | Դպրոցի հնարավորություններից ելնելով՝ հարստացնել գրագարանային ֆոնդը:<br><br>Դասագրքերով ապահովել աշակերտներին, մշակել համապատասխան փաստաթղթեր: | ուստարվա ընթացքում, մշտապես սեպտեմբեր | Գրադարանավար,աշխորհուրդ<br><br>Գրադարանավար | |

# Ներդպրոցական վերահսկողության համակարգ

| № | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխանատու անձ | Ծանոթութ-յուն |
|---|---|---|---|---|
| 1. | Յուրաքանչյուր շաբաթվա վերջում գումարել տնօրինության նիստ, վերլուծել շաբաթական պլանները.<br>ա/ Լսել տնօրինության անդամների հաղորդումը շաբաթական պլանների կատարողականի մասին: Բացահայտել աշխատանքում տեղ գտած թերությունները:<br>բ/ Քննարկել հաջորդ շաբաթվա աշխատանքային ծրագրերը: | ուստարվա ընթացքում | Տնօրեն ,փոխտնօրեններ | |
| 2. | Ուստարվա սկզբից կատարել աշխատանքի բաժանում որոշակի դարձնելով յուրաքանչյուրի աշխատանքի շրջանակները: | օգոստոսի վերջ | Տնօրեն,փոխտնօրեններ | |
| 3. | Ստուգել և հաստատել ծրագրային նյութերի թեմատիկ պլանավորումները: | սեպտեմբերի սկիզբ | Տնօրեն,ուսմասվար,մ/մ նախագահ | |
| 4. | | մշտապես | | |
| 5. | Յուրաքանչյուր ամսվա վերջին տնօրինության նիստում քննարկել սովորողների հաճախումների հարցը: | սեպտեմբեր | Տնօրեն,ՄԿԱ,դասղեկներ | |
| 6. | Ստուգել պարտադիր կրթության օրենքի սահմանադրական պահանջի կատարման վիճակը դպրոցում և արդյունքները քննարկել տնօրինության նիստում կամ մանկավարժական խորհրդում: | դեկտեմբեր ապրիլ | Տնօրեն,փոխտնօրեններ | |
| 7. | ա/ Ավարտական դասարանների սովորողների գիտելիքներին, կարողությունների ու հմտություններին ծանոթանալու նպատակով տարեկան 2 անգամ | դեկտեմբեր ապրիլ | Տնօրեն,ուսմասվար,մ/մ նախագահներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | անցկացնել ստուգողական գրավոր աշխատանքներ<br>բ/ Գրավորների արդյունքները քննարկել առարկայական մասնախմբերում և մանկավարժական խորհրդի նիստերում:<br>Ստուգել ուսումնական ծրագրերի կատարողականը և արդյունքները քննարկել տնօրինության ընդլայնված նիստում: | դեկտեմբեր մայիսի սկիզբ | Տնօրեն,փոխտնօրեններ | |

## Աշխատանք ծնողների հետ

| № | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխա նատու անձ | Ծանոթու թյուն |
|---|---|---|---|---|
| 1. | Նախապատրաստել ընդհանուր ծնողական ժողով և քննարկել դպրոցի առջև ծառայած համատեղ լուծման ենթակա հարցերը: | ուստարվա ընթացքում | Տնօրեն,ՄԿԱ | |
| 2. | Կազմել ծնողների համար անցկացվող զրույցների և զեկուցումների թեմատիկ պլան:<br>Պլանավորել ծնողական խորհրդի աշխատանքները: | սեպտեմբերի ուստարվա ընթացքում | ՄԿԱ,դասղեկն եր<br>ՄԿԱ,ծնող. խո րհրդի նախագահ | |
| 3. | Նպաստել ծնողական և կառավարման խորհուրդների գործունեությանը: | մշտապես | | |
| 4. | Ապահովել դպրոցի և ծնողների համատեղ գործունեությունը սովորողների ուսուցման ու դաստիարակության բարելավման գործում: | մշտապես | ՄԿԱ,ծնող. խո րհրդի նախագահ | |

## Ֆինանսատնտեսական գործունեություն և ուսումնական բազայի ամրապնդում

| № | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխանատու անձ | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1. | Կազմել տարեֆիկացիա: | սեպտեմբեր | Տնօրեն ,հաշվապահ | |
| 2. | Բյուջետային ծախսերի նախահաշիվը ներկայացնել դպրոցի կառավարման խորհրդին: | ուստարվա ընթացքում | | |
| 3. | Հսկողություն սահմանել սովորողների սննդի կազմակերպման նկատմամբ: | սահմանված ժամկետում | Տնօրեն, ՄԿԱ-ի գծով փոխտնօրեն | |
| 4. | Հետևել դպրոցի ջեռուցման ներքին ցանցի անխափան աշխատանքին: | ուստարվա ընթացքում | Տնօրեն ,տնտեսվար | |
| 5. | | ուստարվա ընթացքում | | |

## Կազմակերպական-մանկավարժական աշխատանք

| № | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխա նատու անձ | Ծանոթու թյուն |
|---|---|---|---|---|
| 1. | Ծանոթացնել ԿԳՄՍՆ ուղեցույցի հետ: | օգոստոս | Տնօրեն | |
| 2. | Կատարել դասաբաշխում: | սեպտեմբեր | Տնօրեն. ուսմա սվար,մ/մ նախագահ | |
| 3. | Կոմպլեկտավորել դասարանները և նշանակել դասղեկներ: | սեպտեմբեր | Տնօրեն | |
| 4. | Կազմել դասացուցակ:<br>Հաստատել թեմատիկ պլանները: | սեպտեմբեր | Տնօրեն,ուսմա սվար | |
| 5. | Ուսումնասիրել աշակերտների շարժը և կազմել հաշվետվություն | սեպտեմբեր | Տնօրեն,գործա վար | |
| 6. | Օգոստոսի 31-ին առաջին դասարանցիների ընդունման արարողություն, կազմակերպչական խնդիրների քննարկում: | օգոստոս | Տնօրեն,ՄԿԱ-ջի գծով փոխտնօրեն,դ ասվար | |
| 7. | Մեթոդ մասնախմբի պլանների քննարկում և հաստատում | սեպտեմբեր | Տնօրեն,ուսմա սվար | |
| 8. | Առարկայական թեմատիկ պլանների քննարկում և հաստատում: | սեպտեմբեր | Տնօրեն,ուսմա սվար,մ/մ նախագահ | |
| 9. | Ծանոթացնել մասնախմբի անդամներին տարակարգի բնութագրիչներին,կամավոր ատեստավորմանը և դրանց շնորհման չափանիշներին՝ մղելով նրանց տարակարգ ստանալուն: | սեպտեմբեր | Տնօրեն,ուսմա սվար | |
| 10. | Հրավիրել դասղեկների խորհրդակցություն, պլանավորել նրանց աշխատանքային տարեկան գործունեությունը: | սեպտեմբեր | Տնօրեն,ՄԿԱ-ջի գծով փոխտնօրեն | |
| 11. | Հրավիրել ծնողկոմիտեների խորհրդակցություն: | սեպտեմբեր | Տնօրեն,ՄԿԱ-ջի գծով փոխտնօրեն | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 12. | Հրավիրել մանկավարժական խորհրդի նիստ: | պարբերաբար | Տնօրեն,ուսմասվար | |
| 13. | Կատարել սահմանված կարգով և ժամանակացույցով: | սեպտեմբեր | | |
| 14. | Ստեղծել աշխատանքային բարենպաստ պայմաններ վերը նշված կառույցներում աշխատանքները կազմակերպելու համար: | մշտապես | Տնօրեն, ՄԿԱ-ի գծով փոխտնօրեն, տնտեսվար | |
| 15. | Ուսումնական մասնաշենքի յուրաքանչյուր հարկում, բակում, ձևավորված սրահներում կազմակերպել ամենօրյա հերթապահություն: | մշտապես | Տնօրեն,ՄԿԱ-ի գծով փոխտնօրեն | |
| 16. | Սահմանել կարգ<br>1.Յուրաքանչյուր աշխատող աշխատանքի ներկայանա դասերն սկսելուց 15րոպե առաջ՝ ըստ <<Աշխատանքային ժամանակացույցի>>՝ հիմք ընդունելով <<Ներքին կարգապահական կանոնները>>: | Ուստարվա<br>Ուստարվա | Տնօրեն,ՄԿԱ-ի գծով փոխտնօրեն, Ուսմասվար | |
| 17. | Սահմանել վարչասպասարկող անձնակազմի աշխատանքային ռեժիմը: Արտահայտել <<Աշխատանքային ժամանակացույցում>>: | մշտապես | Տնօրեն,տեղակալներ | |
| 18. | Հետևել, որպեսզի դասղեկները և կաբինետի պատասխանատուները պատասխանատվություն կրեն գույքի և անվտանգության կանոնների պահպանման համար: | Ուստարվա | ՄԿԱ-ի գծով փոխտնօրեն, Դասղեկներ | |
| 19. | Դասասենյակները, կաբինետները, ուսումնական գույքը և սարքավորումները նախապատրաստել նոր ուստարվան: | մշտապես | Տնօրեն,տնտեսվար | |
| 20. | Անցկացնել տնօրենին կից խորհրդակցություններ՝ յուրաքանչյուր շաբաթ: | օգոստոս | Տնօրեն,տնօրենի տեղակալներ | |
| 21. | Դպրոցական շենքը նախապատրաստել նոր ուսումնական տարվան: | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | |

# Ներառական կրթություն

| № | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխանատու անձ | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1. | Ներառական կրթությունը որպես նպատակ ամրագրել հաստատությունում գործող բոլոր օղակներում: | Տարվա ընթացքում | Տնօրեն,ուսմասվար | |
| 2. | Ուշադրություն դարձնել ներառական կրթության ապահովմանն ուղղված համապատասխան միջոցառումներին , այդ թվում ուսուցիչների վերապատրաստումներին: | Տարվա ընթացքում | Տնօրեն,ուսմասվար | |
| 3. | Իրականացնել երեխաների հավասար իրավունքներին, հանդուրժողականությանը նվիրված և նման այլ ուսումնական ծրագրեր: | Տարվա ընթացքում | Տնօրեն,ուսմասվար | |
| 4. | Վերահսկողություն իրականացնել ԿԱՊԿ ունեցող սովորողների հոգեբանամանկավարժական թիմի աշխատանքներին: | Տարվա ընթացքում | Տնօրեն,ուսմասվար | |
| 5. | ԿԱՊԿ ունեցող սովորողներին ապահովել դասագրքերով: | Տարվա ընթացքում | Տնօրեն,գրադարանավար | |
| 6. | Ապահովել համապատասխան ուսումնամեթոդական նյութերով և սարքավորումներով: | Տարվա ընթացքում | Տնօրեն | |
| 7. | Ուսումնական պլանները մշակել համաձայն հանրակրթական պետական չափորոշչի և առարկայական ծրագրերի, հաշվի առնելով սովորողների կարիքները հնարավորությունները, ձեռքբերումները և առաջընթացը: | Տարվա ընթացքում | Տնօրեն,ուսմասվար | |
| 8. | Ապահովել ԿԱՊԿՈՒ երեխաների մասնակցությունը համադպրոցական միջոցառումներին: | Տարվա ընթացքում | Տնօրեն,ուսմասվար | |